ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ԽՐԽԱՓՈՐԻ ՁՈՐԱՀՈՎՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմական Հայաստանի Արցախ նահանգի տարածքը, լեռնային բնաշխարհի շնորհիվ, հարուստ է արագահոս ու սահանքավոր գետերով և դրանց բազմաթիվ վտակներով։ Ուշ միջնադարում նահանգի կենտրոնական գավառներից մեկը, որ վաղ միջնադարից հայտնի էր Աղվե անունով, Գյուլիստան էր վերանվանվել։ Նրա տարածքով հոսում է Սև ջուր (Ղարասու) գետը, որն իր անունը ստացել է նրանում գտնվող սև քարերի պատճառով։ Սև ջուրը իր միջին հոսանքում աջից ընդունում է մի փոքր վտակ, որի երկարությունն ակունքներից մինչև Սև ջուր գետի հետ խառնվելը հազիվ 17—18 կմ կլինի։ Վտակի գետաբերանի շրջանում գտնվում է Նոր Խրխափոր գյուղը (այժմ Ադրբ. ՍՍՀ Շահումյանի շրջանում), իսկ գետակի հունով նրանից 5 կմ վեր հին կամ պատմական Խրխափոր գյուղն է։ Խրխափոր վտակի (համանուն գյուղի անունով) հովիտը հնում շատ խիտ է բնակեցված եղել։ Այդ են վկայում տեղում պահպանված վեց գերեզմանոցների, 4—5 գյուղատեղերի, 4 եկեղեցիների և այլ կիսավեր հնությունների մնացորդները։ Ձորահովտում պահպանված հնությունները տեղադրված են վտակի աջ ու ձախ կողմերում։ Ստորև քննարկվող հուշարձանները ներկայացնում ենք սկսած գետակի ակունքներից։ Այս հուշարձանների վերաբերյալ տեղեկությունները խիստ սակավ են։ Երվանդ Լալայանի[1] և Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի[2] կողմից տրված են նրանց համառոտ նկարագրությունները։

Խրխափորի ձորահովտում գտնվող հնավայրերից հավաքել ենք թվով 21 արձանագրություն, որոնք վերաբերում են XII—XVIII դդ. և որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։ Նախկինում նրանցից հրապարակված են եղել միայն 3-ը, սակայն նկատելի բացթողումներով[3]։

Ձորակի ամենավերին մասում, ակունքներից քիչ ներքև գտնվում է կիսավեր մի եկեղեցի՝ կից գերեզմանոցով, իսկ ոչ հեռու աղբյուրի շրջակայքում կան հին գյուղատեղի հետքեր։ Հնավայրը հայտնի է Կողերի վանք (գծ. 2, նկ. 1) անվամբ։ Այս բնակատեղին, որտեղից հավաքել ենք 7 արձանագրություն, գոյություն է ունեցել մինչև ուշ միջնադար, որից հետո արդեն շուրջ 200 տարի անմարդաբնակ է և շարունակում է քայքայվել։ Կողեր վանքը միանավ, երեք զույգ որմնասյուների վրա հիմնված թաղածածկ բազիլիկ շենք է։ Միակ մուտքն արևմտյան ճակատից է։ Եկեղեցին չունի ավանդատներ, փլված են ամբողջ ծածկն ու պատերի զգալի մասը։ Հուշարձանը կառուցված է կոպտատաշ և անմշակ տեղական կարմրավուն քարից կրաշաղախով։ Շինվածքի միակ սրբատաշ մասը մուտքն է՝ բարավորով հանդերձ։ Սրբատաշ են նաև կոնստրուկտիվ առավել պատասխանատու մասերը՝ որմնասյուները։ Եկեղեցու կառուցողական արվեստը բնորոշ է XIII—XIV դդ.։ Եկեղեցու արևմտյան ճակատի դիմաց, ոչ հեռու, պահպանվել է մի գեղաքանդակ խաչքարի կտոր, 1230 թ. արձանագրությամբ.

ԹԻ(ԻՆ) ։ՈՀԹ։ ԵՍ....
[ՄԽԻ]ԹԱՐ ԵԻ ԵՂԲԷՐ ԻՄ ԽԱ....
....ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱ[ՁՍ]
Ի ԲԱՐԵԽ[ԱԻՍՈԻԹԻՒՆ]....
....ԾՆՈՂ....

Հավանաբար նույն ժամանակի նվիրատվական բնույթի արձանագրություն է եկեղեցու հյուսիսային պատին, ներսից, ստորին շարվածքի քարերից մեկի վրա 4 տողով փորագրված փոքրիկ վիմագիրը։

---

[1] Ե. Լալայան. Գանձակի գավառ. հ. I, Թիֆլիս, 1899, էջ 124։

[2] Մ. Բարխուդարյանց. Արցախ. Բագու, 1895, էջ 243—244։

[3] Կ. Ղահրամանյան. Միջնադարյան մի նորահայտ հուշարձան.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1978, № 5։

ԱԵ ՈՂՈ-
ՐՄԻ ԲԱ-
ՃՈՒՄ
ԻՆ։

Խիստ հնաոճ մի անարձանագիր խաչքար է, ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին, ներ-



Գծագիր

սից, մուտքից հյուսիս։ Խաչքարի զարդամոտիվները բնորոշ են IX—X դդ.։ Այս շատ կարևոր հանգամանք է, և առայժմ միակ իրեղեն ապացույցը տեղում ավելի վաղ գերեզմանոցի, դուցե նաև եկեղեցու գոյության։ Եկեղեցու դռան ճակատակալ սրբատաշ քարի վրա, գրսից փորագրված է 3 տողով արձանագրություն, XVI—XVII դդ. գրչությամբ.

ՏՐ ՍՎ-
ԵՏԻՍ
....Ս

Եկեղեցու արևմտյան սլատի տակ գրսից, տապանաքարի (չափը 72×42 սմ) վրա երկու տողով արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ....ՈՐ....ԱՐԴԻՐ....
ՈՐԴԻ ՏՐ ԵՍԱԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃ (1651 թ.)։

Նույն տեղում մեկ այլ տապանաքարի վրա կա երեք տող արձանագրություն (տապանաքարի չափը՝ 135×58 սմ).

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԵՂԻ
ՈՐԴԻ ՏՐ ՄԱՐԴԻՐՈՍ[ԻՆ] ԹՎ(ԻՆ) ՌՃՀ
(1721 թ.)։

Եկեղեցուց արևելք, ոչ հեռու, մի տապանաքարի վրա կա երեք տող արձանագրություն (տապանաքարի չափը՝ 150×60 սմ).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՅՈՎՀԱՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՃ
ԻԵ (1676 թ.)

Եկեղեցուց հարավ, մի փոքր տապանաքարի վրա (չափերը՝ 60×25 սմ) արձանագրված է.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԹՎ(ԻՆ)
ՇԱՀՂԱԴԻՆ ՌՃՂ (1741 թ.)։

Մոտերքում կան այլ բազմաթիվ տապանաքարեր, սակայն բոլորն էլ անարձանագիր և մասամբ թաղված հողի մեջ։ Կողեր վանքից ներքև, բլրի ստորոտին կա աղբյուր, որի շրջակայքում հավանաբար եղել է համանուն գյուղատեղին. պահպանվել են միայն մի քանի տնափոսեր՝ լցված հողով ու ծածկված փարթամ բուսականությամբ։

Հաջորդ հուշարձանը գտնվում է նախորդից հարավ 2—3 կմ հյուսիս, շրջակա բնակիչների կողմից անվանվում է Մանդուռ (գծ. 3, նկ 2ա), որը մատուռ բառի տեղական արտասանությունն է։ Այս մատուռն իր շինարարական արձանագրության մեջ հիշատակված է որպես եկեղեցի, ունի միջին մեծություն (650×440 սմ արտաքին չափերը)։ Եկեղեցին կառուցված է մեծաչափ կիսակոփածո գեղնավուն քարերով ու կրաշաղախով։ Ունի մեկ մուտք արևմուտքից։ Հուշարձանի շրջակայքում գերեզմանոցն է և տնատեղերի մնացորդները, բոլորն էլ ծածկված խիտ անտառով։ Այս հնավայրից հավաքել ենք 5 արձանագրություն, որոնցից 3-ը նախկինում հրապարակված են եղել, սակայն թերի[4]։

Եկեղեցու արևմտյան ճակատին, դռան գլխի սրբատաշ ճակատակալ քարի վրա 7 տողով արձանագրված է.

ԹԻԻՆ :ՁԱ: (1252) ԷՐ:
ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ԵԼՈՏ
ԵԻ ԵՂԲԵՐ ԻՄ ԱԻՏԱՐ ԵԻ ՈՐԴԻ
ԻՄ ՇՆՈՔ[5] ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ

4 Տե՛ս նույն տեղում։

5 Նախորդ հրապարակման մեջ ԵՆՈՔ, որ սխալ է (տե՛ս նույն տեղում)։

ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ Ն[Ն]ՋԵՑԵԼՈՑ ՄԵՐՈՑ Ի
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ(ԻՆ) ՏՐ ՆԱՐՍԻՍԻ, ԱՄԻՐ-
ԱՅԹԻ(ԻՆ) ԻՒԱՆԻ ԵՒ ՎԱՐՀԱՄՇԱՀԻ

Նույն քարի վրա արձանագրության ձախ կողմում 5 տողով փորագրված է կառուցող վարպետի հիշատակարանը.



Նկ. 1

[ԵՍ] ԵՐԵ-
ՄԻԱՅ Վ-
ԱՐԴ[Պ]ԵՏԻ
ԵՂԿՑԻ[6]... Ա
ՂԱԻ...

Ինչպես պարզվում է, այս և սրա կողքին փորագրված արձանագրություններից, եկեղեցին կառուցվել է եղբայրներ Ավտարի ու Ելտոի և վերջինիս որդի Շնորհի միջոցներով, վարդպետ (ճարտարապետ) Երեմիայի ձեռքով, Հայոց եկեղեցու Աղվանից թեմի կաթողիկոս տեր Ներսեսի օրոք: Վերջինս գահակալել է 1235—1262 թթ.[7]: Նարսիս, ինչպես հիշատակված է արձանագրության մեջ, անկասկած Ներսես անվան տեղական արտասանության ձև է: Ինչ վերաբերում է ամիրաներ Իվանին և Վարհամշահին, ապա նրանց ինքնությունը մեզ հայտնի չէ: Վիմագիրը գոտեվորում են տասնյոթ կիսաշրջան ելուստներ, որոնք յուրահատուկ գեղեցկություն են հաղորդում բարավորին: Շատ կարևոր է եկեղեցուց քիչ արևելք ընկած խաչքարը, 1172 թ. արձանագրությամբ: Չորս տողանոց վիմագրի բովանդակությունն է

ԹՒԻ ՈԻԱ[8] ԵՍ ՄԽԻ
ԹԱՐ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍ[Ո]Ւ[Ր]Բ
ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԱՅԽԱՒՍՈՒԹԻՒՆ
ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ:

Եկեղեցու արևմտյան պատին հենած մի խաչքարի վրա (չափերը՝ 73×45 սմ) կա արձանագրության պատառիկ.

....[Խ]ԱՉՍ ԱՂԵԿԻ
....Ր ՄԱՒՐՆ....
ՈՂՈՐՄԵԱՑ

6 Եղկցի=Եղակերցի. Եղակեր գյուղը գտնվում է Մռավ լեռնաշղթայի հարավային լանջին (այժմ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանում): Եղակեր գյուղի առաջին հիշատակությունը վերաբերում է 1750 թ.: Արձանագրության շնորհիվ պարզվում է գյուղի շեն լինելը 1252 թ. առաջ:

7 Կիրակոս Գանձակեցի. Հայոց պատմություն. Երևան, 1982, էջ 280:

8 Կիմ Ղահրամյանի մոտ՝ ՌԻԱ (տե՛ս նշվ. աշխ.), ճիշտը՝ ՈԻԱ:

Մեծաչափ մի տապանաքար (չափերը՝ 150×45), որ գտնվում է եկեղեցուց արևելք, ունի տապանի երեք կողմը գոտեվորող արձանագրություն։ Առաջին երեսին՝

ԹՎ(ԻՆ) ՌԿԲ (1613 թ.) ՀՈԳՈՑՆ

երկրորդ նեղ կողին՝

Տ(Է)Ր ՈՀ(Ա)Ն(Է)Ս Կ(Ա)Ն(ԳՆ)ԵՑ
Ի ՁԽ(Ա)ՁՍ ԿԵՆԱԿՑ
ԻՆ ԻՄ ՀՌՈՒՄԻՆ
ՀՈՐՆ ԱՂ....ՏՆ ՄՈՐՆ
ՓԵՐԻՆ ԵՂԲՈՐՆ
ՎՍՐԴԱՆԻՆ ՄՆ....

. . . . . .

Երրորդ երեսին՝

ԴԱՀ.ՎԻՆ.ՄՍԱԿ.ԽՆԴԿԵՐԻՆ։

Եկեղեցուց բիչ ներքև, ինչպես Կողեր վանքում, կա աղբյուր, որից ավելի ցած, Խրխափոր վտակի ձախ ափին հնագույն գերեզմանոց է, ուր կան խաչքարեր և տապանաքարեր։ Գերեզմանոցը հայտնի է Մանդուռի հանգստարան անունով։ Մանդուռի եկեղեցուց մինչև այս գերեզմանոցն ընկած տարածքի վրա, ձորի ձախ կողմում հնում բնակատեղի է եղել և տեղ-տեղ պահպանվել են տնափոսեր։ Այս հնագույն գերեզմանոցը մասամբ ավերվել է կից ջրամբարի և ճանապարհի շինարարության ժամանակ։ Տեղում բարեբախտաբար պահպանվել են երկու խաչքար (նկ. 2բ) և մի քանի անարձանագիր տապանաքարեր՝ կերտված սպիտակավուն չեքարից։ Խրխափորի ձորահովտում, ինչպես նշվեց վերևում, Կողեր վանքում էլ կար մի հնառՀ խաչքար՝ ագուցված եկեղեցու արևմտյան պատի մեջ։

Հնավայրից բիչ վերև, գետակի աջ կողմում գտնվում է ձորահովտի մեկ այլ նշանավոր հուշարձան, որ վերաբերում է ուշ միջնադարին։ Դա պատմական Խրխափոր գյուղն է, որի ավերակները պահպանվել են վտակի աջ ափին։ Գյուղատեղի վերին ծայրին կիսավեր վիճակով կանգուն է եկեղեցին (գծ. 1, նկ. 2գ)՝ կառուցված 1659 թ., իսկ շրջակայքում գերեզմանոցն է, բազմաթիվ մոտ առ մոտ գտնվող անարձանագիր տապանաքարերով։ Այս հնավայրից հավաքել ենք յոթ արձանագրություն, որոնք բոլորն էլ գտնվում են եկեղեցու պատերի վրա։ Եկեղեցին ունի միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք, միակ մուտքն արևմուտքից է, ավանդատներ չունի։ Թաղը, որն այժմ պահպանվել է միայն ավագ խորանի վրա, պահել են երեք զույգ սրբատաշ որմնասյունները։ Ըստ Նոր Խրխափոր (Խարխափուտ) գյուղի բնակիչների վկայության, շինության ծածկը դեռևս 5—6 տարի առաջ կանգուն է եղել, սակայն վթարային վիճակում։ Եկեղեցու արտաքին չափերն են 15,0×5,20 մ։ Շենքը կառուցված է կոպտատաշ ու անտաշ քարերով և կրաշաղախով։ Սրբատաշ են միայն որմնասյուները և ավագ խորանի անկյունաքարերը։ Որմնասյան սրբատաշ կորավուն քարերից մի քանիսի վրա պահպանվել են կիսաեղծ արձանագրություններ։ Եկեղեցու ավագ խորանում, արևելքից բացված լուսամուտի մոտ, պատի մեջ ագուցված են մի քանի խաչքարեր, որոնցից երկուսի վրա պահպանվել են արձանագրության պատառիկներ, մեկի վրա նաև թվականը։

Խաչքարի վերևում մեկ տողով վիմագրված է՝

....Բ(Ա)Ր(Ե)Խ(ԱԻ)Ս....

Ստորին մասում երկու տողով վիմագրված է.

....ԵԻ ԻՄ ԾՆՈՂ
ԱՑՆ ՌԿԳ (1614 թ.)

Երկրորդ խաչքարի վրա վերևում մեկ տող և ստորին մասում՝ երկու տող.

....Բ(ԱՐԵ)Խ(ԱԻՍ)....
....Ն ԵՂՍԱԲԵՏԻՆ
....ԻՆ....

Վերոհիշյալ թվակիր (1614 թ.) խաչքարի միջոցով պարզվում է, որ ինչպես Մանդուռում, այստեղ ևս եկեղեցու կառուցումից առաջ եղել է գերեզմանոց, գուցե նաև եկեղեցի, որի իրեղեն միակ ապացույցն է եկեղեցու հյուսիսային կամարաշարքի կոր տաշված սրբատաշ քարերից մեկը Ռ (1551) թվականով։

ԾԲ Խ(Ա)ՁՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԱԿ-
ՈԲԻՆ, ԿԵՆԱԿՑԻՆ ՄԱ-
ՐԵԱՆԻՆ, ԻՇԱՏ(ԱԿ) ԻԻՐ
ԽԱՁԱՏՈՒՐԻՆ ՊԱ....
....ՐՆ ԹՎ(Ի)Ն Ռ (1551 թ.)։

Ավագ խորանի հյուսիսային կողմում, թաղի ոտքը հանդիսացող սրբատաշ քիվանման քարի վրա փորագրված է եկեղեցու հիմնադրման մասին տեղեկացնող չորս տողանոց արձանագրությունը.

։ԹՎ(ԻՆ)։ ՌՃԸ (1659 թ.)։ ԿԱՄԱԻՆ ԱՅ ՇԻՆ-
ՑԻՆՔ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅՐ(Ա) / Պ(Ե)ՏՈՒԹԻ(ԱՄ)ԲՆ
ՊԵՏՐՈՍ ԿԱԹ(ՈՂԻԿՈ)Ս Ք(Ա)Հ(Ա)Ն(ԱՅԱ)-
Պ(Ե)ՏՈՒ։ / ՎԵՐԱԿԱՑՈՒՆ՝ Ն(Ա)ԻԱՍ(Ա)ՐԳՆ /
ՅԻՇԵՑԷՔ։

Աղվանից Պետրոս կաթողիկոսը, որը հիշատակված է արձանագրության երկրորդ տողում,



Նկ. 2

գահակալել է 1653—1675[9] թթ.։ Սա Հայոց եկեղեցու Աղվանից թեմի առաջնորդն էր, խաչենի խանձր (խանցկ) գյուղից, ուր ևս մի նմանատիպ եկեղեցի է կառուցված 1673 թ.։

Եկեղեցում պահպանված մյուս արձանագրությունները հետևյալներն են։ Ավագ խորանի հարավակողմի թիվանման սրբատաշ կամարի ոտքի վրա՝ կիսաեղծ վիմագրված է.

ԲՎ(ԻՆ) ՌՃԸ (1659 թ.)
Յ(Ի)ՇԱՏԱԿ (Է)
...ՄԵՋ
ՄԱՅՐՆ ԻՐՆ ՍԱՆԴՈՒԽՏ
ԱՆԱՐԺԱՆ ՍԱՐԳ....
Հ(Ա)ՅՐՆ ԻՄ Մ(Ա)Հ(Ա)Կ....
ԵՂԲ(Ա)Յ(Ր)Ն ԻՄ ԵՍ(Ա)ՅԻՆ....
....Պ....

Վիմագրի կենտրոնում մարդու քանդակ է, ձեռքին, առանձին քառակուսու մեջ, հակիրճ արձանագրություն (հավանաբար իր անունն է).

Պ(Ա)ՂՏ(Ա)Ս(Ա)Ր։

---

9 Հայկական սովետական հանրագիտարան. հ. 1, Երևան, 1974, էջ 263։

Եկեղեցու հյուսիսային պատի մեջ ագուցված տապանաքարի նեղ կողի վրա արձանագրված է.

ՍԲ Խ(Ա)ՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է....
ԿԱՄ....Ն ԾՆՈՂ-
ԱՑ ԻՄ ....ՄԻՐՋԻ
ՆԽ....(ԽԱ)ԹՈՒՆԻՆ
ԻՄ ՈՐԴ(Ի).... ՄԻՐՋ....
Ն....ՈՀԱՆԷՍ
ԿԱՆԿՆ....Ա....ԹՎ(Ի)Ն Ռ
ՃԺԲ (1663 թ.)։

Եկեղեցու հյուսիսային պատի մեջ ագուցվա՝ տապանաքարի նեղ կողի վրա երեք կարճ տող՝

ՍԲ Խ(Ա)Չ
Ս Բ(Ա)Ր(Ե)Խ
(Ո)Ս։

Եկեղեցու շրջակայքում մոտ առ մոտ կան անմշակ կամ կիսամշակ բարից կերտված շատ տապանաքարեր, իսկ ավելի վեր՝ XIX դարի և XX դարի սկզբի՝ արձանագրություն ունեցող տապանաքարեր են, որ ապացուցում է բնակավայրի շեն լինելը մինչև դարասկիզբ։ Պատմական կամ Հին Խրխափոր գյուղի վերաբերյալ կան մի քանի կցկտուր մատենագրական տեղեկություններ[10], ինչպես օրինակ՝ XVII դարի վերջերին Աբրահամ յուզբաշու (Իբրահիմ գյավուր) և Մելիք Բեգլար I-ի կռիվը և վերջինիս կողմից Վերին և Ներքին Շենների, Էրքեջի Գյուլիստանի (իր բերդով) խլելը և իր տիրույթներին միացնելը։ Խրխափոր գյուղը գտնվում է թվարկված բնակավայրերի միջև և բնականաբար դրանց հետ մեկտեղ անցել է Գյուլիստան գավառի տեր Մելիք Բեգլար I-ին։

Մեկ այլ տեղեկություն, որ կապված է Մելիք Բեգլար II-ի հետ, այս է. Մելիքը XVIII դարի վերջին Խրխափորի ձորակում այգի է տնկում ու կառուցում ամառանոց։ Ի դեպ, այդ շինության ավերակները դեռևս XX դարի սկզբին պահպանված են եղել, որ և տեսել է մեծ ազգագրագետ և բանահավաք Երվանդ Լալայանը[11]։

Կան և այլ տվյալներ, որոնք, սակայն, չեն վերաբերում պատմական Խրխափորին, այլ տեղեկացնում են հնից ներքև հիմնադրված Նոր Խրխափոր գյուղում կատարված տարբեր կառուցումների մասին (օր.՝ եկեղեցին 1873 թ., աղբյուրը 1893 թ. և այլն)։ Հին և Նոր Խրխափոր գյուղերի միջև, վտակի աջ կողմում Նոր Խրխափորի այժմյան գերեզմանոցն է, ուր պահպանված տապանաքարերից հներն ունեն XVII դարի արձանագրություններ։ Ներկայացնում ենք դրանցից երկուսը.

ԱՅՍ Է ԴԱՊԱՆՍ ՂԱԶԱՐԻ ՈՐԴԻ ՊԵՏՐ
ՈՍԻՆ ....ՐԱՅՐ ՆՈՐԱ ԱՆԱՅԻՆ ԹՎԻՆ ՌՃՂԷ
(1748 թ.)։

Մեկ ուրիշ տապանաքարի վրա՝ ոճն ու առաձևերը XVIII դար.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎԱՆԻՍԻՍ։

Խրխափորի ձորահովտում կան նաև այլ հնավայրեր, որոնցից է վտակի աջ կողմի բարձր անտառապատ լեռներում գտնվող բնակատեղին, ծածկված խիտ անտառներով։ Վերջին տարիներին տեղանքը ենթարկվել է սողանքի, որի հետևանքով հայտնաբերվել են բազմաթիվ կավե ամաններ, կճուճներ, պղնձե թասեր և այլ հնագիտական իրեր։ Հնավայրը շրջակա բնակիչներն անվանում են «Վերհաղած», որ նշանակում է ներքև թափված, տեղաշարժված։

Քանի որ վերջերս լույս տեսած «Դիվան հայ վիմագրության» գրքի 5-րդ պրակի համապատասխան բաժնում բացակայում են ներկայացված 21 արձանագրությունները, կարծում ենք, սույն հրապարակումը մի փոքրիկ լրացում կարող է հանդիսանալ «Դիվանում» հավաքված նյութերին*։

Ս. Դ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

10 Ե. Լալայան. Նշվ. աշխ., էջ 12։
11 Նույն տեղում, էջ 24։

* Շնորհակալություն ենք հայտնում Խրխափոր գյուղի բնակիչ Բորիս Հովհաննիսյանին՝ մեզ ցույց տված աջակցության համար։